

Զվարթնոց, արևմտյան ճակատ։
Վերակազմությունը՝ Թորոս Թորամանյանի

Զվարթնոցի առաջին աստիճանի հատակագիծը։
Վերակազմությունը՝ Թորոս Թորամանյանի



ՏԻՐԱՆ ՄԱՐՈՒԹՅԱՆ
Ճարտարապետ

ԶՎԱՐԹՆՈՑ

Դեռևս յոթերորդ դարի կեսերին Էջմիածնից արևելք՝ մոտ երեք կիլոմետրի վրա կառուցվում է հայ շինարարական արվեստի գլուխգործոցներից մեկը՝ Զվարթնոց տաճարը։

Ինչպես կառուցմանը ժամանակակից, այնպես էլ հետագայի մեր միջնադարի մատենագիրները ձոներ են նվիրում Զվարթնոցին և խորին ակնածանքով ու բարի խոսքով հիշում ամենայն հայոց կաթողիկոս Ներսես Գ Շինողին, որն իր ժամանակի ականավոր քաղաքական դեմքերից էր, երբեմնի Բյուզանդական կայսրության զինվորական հայտնի գործիչներից։

Զվարթնոցը կանգուն գոյատևում է մինչև տասներորդ դարի վերջերը՝ շուրջ 350 տարի, ապա կործանվում. նրա պիտանի քարերը տարվում են, մնացածները ծածկվում հողի շերտով։

Պեղումների մասնակից (1904 թվականից) հայ անվանի ճարտարապետ և հմուտ գիտնական Թորոս Թորամանյանը ավերակի տվյալների և այլ հետազոտությունների հիման վրա ստեղծում է հուշարձանի առաջին վերակազմության նախագիծը (1905 թ.)։

Ըստ Թորամանյանի՝ Զվարթնոցը շրջանց սրահի մեջ առնված մեծ չափերի քառախորան է (տետրակոնխ), եռաստիճան, կենտրոնագմբեթ՝ աստիճանաբար փոքրացող երեք թմբուկներ, դրված միմյանց վրա։ Տաճարի խաչաձև կենտրոնը կապվող չորս խորաններից արևելյանը, որ ավագ սեղանն է, ստեղծված է հոծ պատով, մյուս երեքը՝ սյունակամարաշարով, կապավորված վեցական սյուներով՝ յոթական կամարներով։

Գմբեթատակ քառակուսու չորս անկյուններում առկա են հաստահեղույս մայր մույթեր, որոնց տաճարի կենտրոնին ուղղված անկյունները կգալի տրամագծի կիսասյուներ են, շրջանց սրահին ուղղված մասերը՝ կիսաշրջան խորշեր, դիմացը առանձին կանգնած սյուներ՝ արծվախոյակով։

Տաճարի կենտրոնն իր մեջ առած բոլորակ սրահը ստեղծվել է արտաքին մեծ թմբկապատով, որը ներսից բոլորակ է, դրսից՝ բազմանիստ։

Տաճարին արևելակողմից հարում է ուղղանկյուն մի շինություն, որ բոլորակ տաճարի հետ հաղորդակցվում է ընդհանուր պատի վրա առկա երկու դռներով։

Թորամանյանի վերակազմությամբ Զվարթնոցի առաջին աստիճանի սահմաններում շրջանց սրահն ունեցել է երկրորդ հարկաբաժին՝ վերնահարկ։ Վերակազմության կտրվածքի գծագրում երեք սյունակամարապարդ խորանների վերևում, Թորամանյանը ցույց է տվել երեք, նույնպես սյունակամարապարդ օթյակներ, որտեղով վերնահարկում գտնվողները պիտի հաղորդակցվեին տաճարի կենտրոնում տեղի ունեցող արարողությանը։

Առաջին հարկաբաժնի շրջանց սրահը ծածկող թաղի նման, մի երկրորդ թաղ էլ ծածկել է երկրորդ հարկաբաժնի շրջանց սրահը։ Վերոհիշյալ թաղերը մի կողմից հենվել են տաճարի արտաքին թմբկապատին, մյուս՝ ներքին կողմից այդ նույն թմբկապատին կուգահեռական այն բոլորակ հենարանին ու նրա վրա բարձրացած պատին, որ ճարտարապետը ստեղծել է ստորին մեծաթռիչք թաղերի օգնությամբ։ Եվ որպեսզի վերնահարկում եղողները կարողանան հաղորդակցվել տաճարի կենտրոնին, վերջինիս ծածկաթաղի ներքին հենարան-սյուները, Թորամանյանի կարծիքով, պետք է եղած լինի սյունապարդ։

Թորամանյանի վերակազմությամբ տաճարի քառախորան կենտրոնը բարձրանում է մինչև գմբեթատակ։ Այդ քառաթև կենտրոնը տաճարի երկրորդ աստիճանի սահմաններում արտաքուստ փաթաթվում է 32 նիստեր ունեցող թմբկապատով։ Ներքին խաչաձևի և արտաքին բոլորակի համադրումով մայր մույթերի երկու կողմերում այդ բարձրության վրա կրկին առաջանում են մոտավորապես եռանկյունաձև խորշեր, որոնց պատերի վրա թե դրսից, թե ներսից եղել են լուսամուտներ։

Տաճարի երրորդ աստիճանը Թորամանյանի վերակազմությամբ 16 նիստերով թմբուկ է և վերևից ունի կոնաձև վեղար։

Զվարթնոց տաճարի շինանյութը սև ու շագանակագույն տեղական տուֆաքարն է և կրաշաղախը։ Հենվող կանգվածներում օգտագործվել են նաև թեթև շինանյութեր, այդ թվում պեմզաներ, վանական չեչաքարեր, պերլիտներ (փքեցված օբսիդիան), դատարկ կարասներ, որոնք ունեցել են նաև ակուստիկ նշանակություն։

Տաճարի արտաքին ու ներքին հարդարանքը նույնպես ստեղծված է նույն տուֆաքարով։ Շինության բոլոր թմբկապատերով անցնում է դեկորատիվ սյունակամարաշար։ Առաջին աստիճանի թմբկապատը, որ ունի զգալի բարձրություն, ի տարբերություն երկրորդի և երրորդի, ըստ բարձրության բաժանվում է երկուսի։ Առաջինի՝ բարձր մասի կամարաշարի սյուները զույգ-զույգ դասավորված են հարևան նիստերի հանդիպման անկյուններում։ Կամարաշարի վերևով անցնող հորիզոնական բարակ գոտու ու կամարների միջև ստացված հարթությունը (անտրիվոլտ) պատված է հարուստ հարթաքանդակով։ Թմբկապատի վերին՝ փոքր հատվածը հատապատասխանում է շրջանց սրահի երկրորդ հարկաբաժնին՝ վերնահարկին։

Տաճարի ներսը լուսավորում են առաջին, երկրորդ և երրորդ թմբկապատերի նիստերից յուրաքանչյուրի վրա բացվող մեկական ձգված համաչափությամբ, վերնահարկը՝ բոլորակ լուսամուտներով։

Այսպիսով պարզորոշ ընկալվում է այն համապատասխանությունը, որ կա տաճարի առաջին աստիճանի ներքին շրջանց սրահի երկհարկ լինելու և թմբկապատի արտաքին հարթության, ըստ բարձրության երկուսի բաժանված ճարտարապետական կազմության միջև։

Տաճարի վերին աստիճաններում դեկորատիվ կամարաշարի սյուները նույնպես տեղադրված են կից նիստերի անկյուններում, սակայն մեկական հատ և ունեն նույն տրամագիծը, ինչպիսին ունեն ստորին սյուները։

Անկախ նրանից, որ Զվարթնոցի Թորամանյանի վերակազմության նախագիծը վաղուց ի վեր արժանացել է համընդհանուր ճանաչման, և տաճարն այդ վերակազմության ձևով է մուտք գործել մարդկանց գիտակցության, պատկերացումների մեջ, առավել ևս՝ գիտական գրականություն, անցած տասնամյակների ընթացքում երբեմն-երբեմն, այդ վերակազմությանը չեն համաձայնում տարբեր հետազոտողներ,

© National Library of Armenia

նույնիսկ առաջարկվում են նոր վերակազմություններ, որոշ դեպքերում էապես տարբեր նախորդից:

Թորոս Թորամանյանի Զվարթնոցի վերակազմության առաջին փիճարկողը եղել է հուշարձանը պեղող վարդապետ Խաչիկ Դադյանը: Որպես նրա անհամաձայնության իրական վկայություն, մեզ են հասել Թորամանյանի կազմած Զվարթնոցի կտրվածքի և ճակատի այն գծագրերի լուսանկարները, որոնցում գմբեթային մասը չկա: Դրանք դեռ այն ժամանակ կտրել էր Դադյանը, համոզված լինելով, որ ավելորդ են, քանի որ իբր հայկական եկեղեցիները կրկնակի գմբեթ չեն ունեցել, այսինքն՝ չեն եղել եռաստիճան:

Դադյանն իր սխալում ի վերջո համոզվեց, երբ Ն. Մառը հայտնաբերեց Գագկաշենի մանրակերտը, տեսնելով այդ մանրակերտի և Թորամանյանի մինչ այդ ստեղծած Զվարթնոցի ճակատի միակերպությունը: Չէ՞ որ համաձայն 11-րդ դարի հայ մատենագիր Ասողիկի, Գագիկ թագավորը իր տաճարը կառուցել էր Զվարթնոցի ճարտարապետությամբ և չափերով:

Արքեպիսկոպոս Մեսրոպ Տեր-Մովսեսյանը, որ Զվարթնոցի պեղածո նյութերի առաջին հրատարակողն էր, Թորամանյանի վերակազմության հավաստիությունը ստուգում էր Էջմիածին հրավիրված ճարտարապետ Քրիստափոր Տեր-Սարգսյանի միջոցով: Վերջինս սկզբնապես անհամաձայն լինելով Թորամանյանի վերակազմությանը, ժամանակ անց լսելով նրա բացատրությունները, Թորամանյանի խոսքերով ասած՝ «լիովին ընդունելով ներքին հարկերու վերաբերյալ բոլոր ցուցմունքներս՝ միայն անհամաձայն մնաց ինձ հետ գմբեթի կազմության մասին»:

Ա. Վ. Կուկնեցովը 1951 թ. հրատարակած իր «Կենտրոնագմբեթ շինությունների տեկտոնիկան և կոնստրուկցիան» (ռուսերեն) աշխատության մեջ, ի թիվս աշխարհի նշանավոր շատ հուշարձանների, անդրադարձել է նաև հայ ճարտարապետության մեծ թվով կենտրոնագմբեթ տաճարների, այդ թվում և Զվարթնոցի ընդհանուր հորինվածքային ու տեկտոնիկական կազմության քննությանը:

Կուկնեցովը հնարավոր է համարում Զվարթնոցի վերակազմության երկու տարբերակ, մեկը Թորամանյանի նախագծի ձևով, մյուսը՝ իր նոր առաջարկության, որ ներկայացրել է սխեմատիկ էսքիզով: Համաձայն նրա առաջարկի, Զվարթնոցի առաջին աստիճանը հանդիսացել է բոլորաձև պատվանդան, որի վրա բարձրացել է երկրորդ աստիճանի հիմքում խաչաձև ծավալը:

Վերլուծելով Թորամանյանի վերակազմությունը, Կուկնեցովը գտնում է, որ Զվարթնոցի, նաև Բանակ տաճարի ճարտարապետներին չի հաջողվել ստեղծել կենդանի կապ ներքին խաչագմբեթարդ տարածության և արտաքին թմբկաձևի (ռոտոնդաձևի) միջև: Դրա հետևանքով, նշում է նա, տաճարի երկրորդ աստիճանի 32 լուսամուտներից 12-ն են լուսավորում տաճարի ներսը, մնացածը կույր են, որ իբր նրանք բացվում են փակ խորշերի վրա: Գիտնականը վերնահարկի հարցը թողնում է բաց ու չի զբաղվում նրա քննությամբ:

Կուկնեցովի կարծիքով, Զվարթնոցը կործանվել է արձվանոյակ սյուների և կամարաշար խորանների միջին երկու սյուների գերլարվածության հետևանքով: Նրա համոզմամբ, «...Զվարթնոցի ճարտարապետի ստեղծագործական համարձակ մտահղացումը չի համապատասխանել դարաշրջանի տեխնիկական գիտելիքների միճակին»: Կուկնեցովը չի բացառում Զվարթնոցի համար մի նոր վերակազմության փորձի հնարավորություն, սակայն, գրում է. «Դժվարությունը, որ առկա է մի այլ, ավելի ճշմարտացի և մեծ հուշարձանին արժանի վերակազմության նախագծի ստեղծման համար, պայմանավորված է Զվարթնոցի կոնստրուկտիվ առումով անտրամաբանական հատակագծով»:

Ա. Վ. Կուկնեցովը մեկ անգամ է եղել Զվարթնոցում և ժամանակի սղության պատճառով հնարավորություն չի ունեցել հուշարձանից վերցնելու առավելագույնը, նա քննությանը մոտեցել է ավելի տեսականորեն, քան կոնկրետ:

Զվարթնոցի կառուցողը նախօրոք նպատակադրված է եղել խաչաձև կենտրոնի և բոլորակ արտաքինի համադրման, դրանում տեսնելով իր քաղաքական հայացքների մարմնավորումը գեղարվեստական ստեղծագործության մեջ: Թորամանյանը այս առիթով գրում է. «Ներսես Գ Շինող արևմուտքեն բերավ Զվարթնոցի բոլորակը... ուզեր է այդ երկու դավանության (լուսավորչական և քաղկեդոնական—Տ. Մ.) եկեղեցիներն ալ միմյանց մեջ ձուլել... անոր ճարտարապետը հայկական նվիրագործված խաչաձևը հունական բոլորակին հետ ներդաշնակորեն պատշաճեցնելու համար արտակարգ հանդգնության հետ եպական հանճար ի գործ դրեր է ի մեծ զարմացումն այսօրվան մեր գիտական աշխարհին» («Անահիտ», 1911, մայիս): Այստեղից հետևում է, որ Զվարթնոցի համար վերակազմության նոր տարբերակի ստեղծումը հակառակ գործի տիրոջ նպատակադրման, անիմաստ է:

Թորամանյանը Զվարթնոցի երկրորդ աստիճանի համար հատակագիծ չի կազմել, դա Կուկնեցովի ենթադրությունն է, որ իբր 32 լուսամուտներից 12-ն են իրական: Թորամանյանի նյութերի հիման վրա նույն դրվագի համար մեր կազմած հատակագծով իրական են ճակատի բոլոր՝ 32 լուսամուտները:

Տաճարի 300—350 տարվա գոյության փաստը ինքնին ապացույց է Զվարթնոցի հատակագծի կուռ տրամաբանության, նրա կառուցողների տեխնիկական բարձր պատրաստականության և հմտության դեռևս 7-րդ դարի կեսերում:

Տարիներ առաջ Զվարթնոցի նոր վերակազմություն է հրապարակել Ս. Մնացականյանը: Այդ վերակազմության հիմքում փաստորեն դրված է Ա. Կուկնեցովի վերակազմական առաջարկության էությունն ամբողջությամբ:

Արդ, որո՞նք են այդ էության գումարելիները, մշակված Մնացականյանի կողմից վերակազմության իր նոր նախագծում:

Ա. Տաճարը սկզբնապես եղել է առանց արևելակողմի ուղղանկյուն շինության. այն տաճարին կից կառուցվել է 9-րդ դարում:

Բ. Տաճարի առաջին աստիճանի սահմաններում շրջանց սրահը վերնահարկ չի ունեցել:

Գ. Տաճարի երկրորդ աստիճանը եղել է հիմքում խաչաձև. շրջագծային պատ գոյություն չի ունեցել:

Դ. Տաճարի երրորդ աստիճանի՝ գմբեթի թմբուկը ունեցել է ոչ թե 16, այլ 12 նիստ. ծածկը արտաքուստ եղել է ոչ թե կոնաձև, այլ կիսագնդաձև:

Ե. Շինության բարձրությունը եղել է բոլորակ հատակագծի տրամագծին հավասար — մոտ 35 մետր:

Այսպիսով, Զվարթնոցը ստանում է բոլորովին այլ մեկնաբանություն, միանգամայն տարբեր այն պատկերից, որ պիսին ամրացել է մեր պատկերացումներում:

Ստորև անդրադառնանք նոր վերակազմության դրույթներից յուրաքանչյուրին առանձին-առանձին:

«Զվարթնոցի վերակազմության հարցի շուրջը» հոդվածում (տես ԳԱ «Տեղեկագիր» Հ. Գ., 1959, № 4, էջ 71) Ս. Մնացականյանը գրում է՝ Թորամանյանի վերակազմության նախագծի «...առավել էական թերությունը՝ արևելյան ուղղանկյուն կառուցվածքը տաճարի շրջանաձև պատի հետ միաձույլ պատկերելն է, մի բան, որը արմատապես ժխտվում է նշված կառուցվածքի և տաճարի շրջանաձև պատի միջև կոնստրուկտիվ կապերի իսպառ բացակայությամբ»: Եվ ապա «պարզ է դառնում, որ այն ավելացված է հետագայում և չէր մտնում տաճարի սկզբնական կոմպոզիցիայի մեջ»:

Երբ ավերակի նոր ուսումնասիրություններով հաստատվում է, որ Զվարթնոցում նախ կառուցվել է բոլորակ տաճարի հիմքը, հետո արևելակողմի ուղղանկյուն կառուցվածքի հիմքը և ապա կառուցվել են տաճարի երկու մասերի պատերը միաժամանակ և միմյանց ձուլված, դեռ ավելին՝ տաճարի երկու մասերի վերոհիշյալ հիմքերը կառուցվել են կամ նույն վարպետի կողմից, կամ նույն վարպետի տաշած քարերով, Ս. Մնացականյանը իր հայացքները վերաշարադրելով գրում է. «...ոչ մի խոսք չի կարող լինել այս երկու կառուցվածքների կոնստրուկտիվ տեսակետից անջատ լինելու մասին» (տես Ս. Խ. Մնացականյան, «Զվարթնոցը և նույնատիպ հուշարձանները», 1971, էջ 49):

Ակներև հակասությունից ելք որոնելով, հետազոտողը գրում է. «...վերակառուցողները պարզապես հեռացրել են ուղղանկյուն հավելվածի լայնությանը համապատասխանող եռաստիճան որմնախարիսխը և լայն, շրջանաձև հիմնապատի վրա բարձրացրել ուղղաձիգ, կենտրոնական ուղղանկյուն ելուստ ունեցող ոչ հաստ պատ»:

Զվարթնոցի ավերակում «կենտրոնական ուղղանկյուն ելուստից» մինչև բոլորակ պատի ներսը հակիվ 85—90 սմ տարածություն կա, այնքան, որքան բոլորակ տաճարի արտաքին թմբկապատի հաստությունն է ու կցվելիք պատի համար տեղ չի մնում: Այս ցույց է տալիս, որ Ս. Մնացականյանի պատկերած «վերակառուցումը» արգասիք է ռեալ ավերակի տվյալներից կտրված դատողությունների:

Ահա այս ինքնաստեղծ, անիրական հիմքի վրա հենված Ս. Մնացականյանը 1978 թ. լույս տեսած «Ակնարկներ հին և միջնադարյան Հայաստանի ճարտարապետության պատմության» կոլեկտիվ աշխատության 99-րդ էջում գրում է. «Արևելակողմից բոլորակ պատին հարում է հետագայում կառուցված ուղղանկյուն կցակառույցը»:

Համաձայն Ս. Մնացականյանի «...9-րդ դարի վերջին, Դվինի կործանարար երկրաշարժից հետո կաթողիկոսարանը տեղափոխվում է Զվարթնոց: Այստեղ ևս անհրաժեշտ էր ունենալ եկեղեցական սկիհների պահպանման մի հուսալի վայր: Այդ առիթով էլ, ամենայն հավանականությամբ, ձեռնարկվել է արևելակողմի ավանդատան կառուցումը...»:

Հետաքրքիր տրամաբանություն՝ 7-րդ դարի կեսերին կաթողիկոս Ներսես Գ Շինողը կառուցում է Զվարթնոցը, կառուցում է նաև կաթողիկոսարանի ընդարձակ համալիրը, մինչ եկեղեցուն կից ավանդատունը կառուցվում է 9-րդ դարի վերջերին միայն: Արդ, եթե Զվարթնոցը կաթողիկոսական եկեղեցի էր, ավանդատունը պիտի կառուցվեր եկեղեցու հետ միաժամանակ, եթե կաթողիկոսական եկեղեցի չէր, ինչու նրա հետ միաժամանակ կառուցվել է կաթողիկոսական մի ամբողջ համալիր:

Ս. Մնացականյանի կարծիքով Զվարթնոցում վերնահարկ չի եղել. «Վերնահարկը այստեղ (Թորամանյանի վերակազմության մեջ—Տ. Մ.) ներկայացնում է որպես մի կեղծ կառուցվածք, որն արված է կարծես թե ճակատի կլոր լուսամուտները տեղավորելու համար...» (Տեղեկագիր, № 4, էջ 76): Նույն տեղում նա գրում է. «Տաճարի ամբողջ պարագծով ձգվող վերնահարկը, որտեղ կարող էին տեղավորվել մի քանի հարյուր մարդ և որը լուսավորված էր բավմաթիվ կլոր լուսամուտներով, փաստորեն կտրված էր տաճարի ինտերյերից և վերջինիս հետ հաղորդակցում էր միայն երեք լուսամուտների միջոցով, որոնց միջից ժամասացությունը կարող էին լսել և տեսնել ընդամենը մի քանի տասնյակ մարդ»:

Այս ամենը Ս. Մնացականյանը ճիշտ է ասում, հիմնվելով վերնահարկի այն հիմնովին սխալ գծագրի վրա, որն ինքն է կազմել ու... վերագրել Թորամանյանին: Վերնահարկի համար նրա առաջարկած հատակագծի երեք տարբերակները մշակված «ըստ Թորամանյանի նյութերի», ինչպես և 1971 թ. հրատարակած «սյունապարդ» տարբերակը, կազմված տողերիս հեղինակի 1963 թ. հրատարակած վերնահարկի հատակագծի նմանությամբ (կատարյալ աղավաղումով), նպատակամղված են բացառելու վերնահարկի գոյությունը ընդհանրապես:

Թորամանյանը վերնահարկի հատակագիծ չի կազմել, սակայն, իր աշխատությունների առաջին ժողովածուի 249 էջում գրում է, որ սրահի ներքին պատը «...հավանաբար ոչ թե գոց, այլ սյունապարդ մը եղած ըլլալու է»: Մինչ Մնացականյանը այդ պատը պատկերում է խուլ և սրահը մեկուսացնում տաճարի ներսից, այդպիսին որակում «կեղծ կառուցվածք» առաջարկված Թորամանյանի կողմից:

Հետազոտողի կողմից վերնահարկի երբեմնի գոյությունը ժխտելու կռվաններից է այնտեղ տանող աստիճանների «հետքերի բացակայությունը» ավերակում:

Բանն այն է, որ վերնահարկի գոյությունը առնչություն չունի այնտեղ տանող աստիճանների գոյության հետ: Հայտնի է, որ Զվարթնոցի կառուցման ժամանակներում հաճախակի էին դարձել արաբների ներխուժումները. կոտորածն ու թալանը Արարատյան դաշտում: Եկեղեցիները, որ կառուցվում էին անառիկ և ամրակուռ, ծառայում էին ժողովրդին պատսպարելու, մինչև հայրենի վորաբաժանումների օգնության հասնելը: Հայ տաճարաշինության մեջ եպակի չեն եկեղեցիները, որոնք վերնահարկեր ունեն, առանց այնտեղ տանող մշտական աստիճանների:

Հետազոտողի ճիգ ու ջանքը բացառելու վերնահարկերի գոյությունը ընդհանրապես հայ տաճարներում, սարքովի, անհիմն տեսություն է: Վերնահարկեր եղել են Զվարթնոցից և առաջ, և հետո: Շատ ավելի վաղ կառուցված և մինչև այժմ կանգուն Ծիծեռնավանքում, խորանի ուղիղ գլխավերևում կա մի ընդարձակ, երեք լայն կամարներով տաճարի ներսի վրա բացվող վերնահարկ: Հետաքրքիր է, որ այնտեղ տանող աստիճաններ չեն հայտնաբերված: Դեռևս հինգերորդ դարում Գյուտ կաթողիկոսի կարգադրությամբ կառուցվում է սյունապարդ վերնահարկով մի տաճար, որի նկարագրությունն է պահպանվում Ստեփանոս Օրբելյանի մոտ. «...վերնատունս սեմբք և սքանչելի յօրինուածքով շինեալ»: Դեռևս յոթերորդ դարում կառուցված Բանակ տաճարում առկա են տարբեր պարագծերի մի շարք վերնահարկեր:

Մի տեսություն ևս, որ առաջ է քաշում Ս. Մնացականյանը ժխտելու վերնահարկի գոյությունը Զվարթնոցում: Նկատի ունենալով, որ վերնահարկ տանող աստիճաններ են ենթադրվում արևելյան ուղղանկյուն կառուցվածքում, հետազոտողը ամեն կերպ հետագա հավելում է համարում այդ շինությունը և, ապա գրում, որ սանդուղքների արևելակողմում դասավորելը կլիներ քրիստոնեական օրենքի խախտում»: Հարկ է առանց հապաղելու նշել, որ քարե աստիճաններ գոյություն ունեն Անիի մայր տաճարի արևելյան՝ ավագ խորանի երկու կողմերում՝ հոծ պատի թանձրության մեջ, ինչպես և Բանակ տաճարում, նույնպես ավագ խորանի երկու կողմերում:

Հատկանշական է, որ դեռևս 1964 թ. ճարտարապետների միությունում քննարկման ներկայացված և, ապա 1967 թ. «Զվարթնոց» դիսերտացիայի ավտոռեֆերատում, հրատարակված քարակերտ սանդուղքների տարբերակը, որ արժանացել է մի քանի գիտնականների հավանության, Ս. Մնացականյանի կողմից հատառորեն լռության է մատնվում, խոսվում է լոկ որևէ մեկի կողմից չառաջարկված շարժական

© National Library of Armenia

սանդուղքների մասին, այդ հիման վրա մերժում վերնահարկի գոյությունը Զվարթնոցում:

Որպես Զվարթնոցի վերնահարկի երբեմնի գոյությունը հավաստող նյութական հիմք ծառայում են՝

Ա) Վերնահարկը լուսավորող կլոր պատուհանների բազմաթիվ բեկորների առկայությունը ավերակում: Զվարթնոցանման Բանակում տվյալ դրվագում կլոր պատուհաններ չկան, որովհետև այդ մասում բոլորակ վերնահարկ չկա:

Բ) Զվարթնոցանման Գագկաշենի մանրակերտում նույնպես առկա են կլոր պատուհաններ, որոնք հորինվածքում պաղեցնում են այն տեղը, որը Զվարթնոցում ցույց է տվել Թորամանյանը, նախքան Գագկաշենի մանրակերտի հայտնաբերումը, 1906 թ.:

Գ) Սենտ-Շապելի երեք հարթաքանդակներում, որոնցում պատկերված է նաև Զվարթնոցը, առկա են բոլորակ պատուհաններ ճշտորեն նույն դիրքում, որպիսի դիրքում են դրանք Գագկաշենի մանրակերտում և Զվարթնոցի Թորամանյանի վերակազմության նախագծում:

Դ) Ավերակի հարավ-արևելակողմում առկա է պահարանով մի կանգված, որ գտնվել է վերնահարկի բարձրության վրա:

Ե) Ավերակի հարավ-արևմտյան կողմում առկա է մի կանգված, որի գետնահայաց մասում պահպանվում է կրաշաղափով հատակի մնացորդ, որ պատկանել է սյունապարդ խորշին վերնահարկի բարձրության վրա:

Զ) Ավերակի հյուսիսակողմում պահպանվում են 45 սմ տրամագծով սյան երեք բեկորներ, որոնք անվրեպ պատկանել են վերնահարկի օթյակաձև սյունակամարաշարին:

Է) Արևմի գյուղի քառախորան փոքր եկեղեցու ներսում պահպանվում է մի կողովահյուս խոյակ, որ պատկանել է վերոհիշյալ օթյակաձև սյունակամարաշարի 45 սմ տրամագծով սյուներից որևէ մեկին:

Ն. Տոկարևկին իր «Հայաստանի IV—XIV դդ. ճարտարապետությունը» (1961) աշխատության 137 էջում նշում է, որ, իրեն հայտնի է Զվարթնոցի վերնահարկի մեկ խոյակ:

Ս. Մնացականյանը Ա. Կուլնեցովի օրինակով մերժում է Թորամանյանի վերակազմությամբ տաճարի երկրորդ աստիճանի թմբկաձևությունը: Կրկնելով իր նախորդին, գրում է. «...ճակատում նշված 32 լուսամուտներից միայն 12-ը կարող են լուսավորել տաճարը, իսկ մնացած 20-ը կեղծ են և բացվում են... դատարկ, անօգտագործելի տարածություններում»: Գերազանցելով Կուլնեցովին, տողատակում ավելացնում է. «...այսպիսով 32 լուսամուտից տաճարը լուսավորում են միայն... 9-ը» (Տեղեկագիր, № 4, էջ 77):

Տաճարի երկրորդ աստիճանի համար Թորամանյանը հատակագիծ չի կազմել: Իրական և անիրական լուսամուտների տվյալ պատկերը ստացվում է Ս. Մնացականյանի կազմած հատակագծով: Տաճարի երկրորդ աստիճանի համար ինչպես ասվեց մեր կազմած հատակագծով իրական են բոլոր 32 լուսամուտները, և նրանք լուսավորում են տաճարի ներքին տարածությունը:

Ս. Մնացականյանը տաճարի երկրորդ աստիճանի ձևերի մասին գրում է. «Այսպիսով դժվար չէ տեսնել, որ տաճարի երկրորդ յարուսի այս շրջագծային պատը ստացվել է միանգամայն արհեստականորեն, և բացի այն, որ չունի և ոչ մի կոնստրուկտիվ դեր, անչափ ավելացնում է մեծաթռիչք, կրկնակի կորություն ունեցող կամարների և հատկապես առանձին կանգնած սյուների բեռնավորվածությունը..., որտեղ մոտ 20 մետր բարձրություն և 10 մետր լայնություն ունեցող պատի ամբողջ ծանրությունն ընկնում է միայն մեկ 0,8 մետր տրամագիծ ունեցող սյան վրա...»:

Նախորդ էջերում ասվեց, որ Ա. Կուլնեցովն ու Ս. Մնացականյանը իրենց հաշիվները կատարել են սխալ մեթոդով, ենթադրելով, որ այդ սյուների ամեն մի քառ. սմ-ի վրա ընկնում է 40—60 կգ բեռ: Կառուցվածքի տարածական աշխատանքի պայմաններում, նոր հաշվումներով 40—60 կգ-ի փոխարեն բեռը իրականում եղել է նորմալ չափերի՝ 12—14 կգ:

Տաճարի երկրորդ աստիճանը քառակոնխային պատկերելը հիմնավորելու համար վերակազմության հեղինակը, որպես նյութական ապացույց ներկայացնում է կամարաղեղների կրնկաքարերը, որոնք դրված են եղել նիստերի անկյուններում կանգնած սյուների խոյակների վրա: Մնացականյանը գրում է. «Այստեղ առավել կարևորը նիստերի անկյունաքարերն են, որոնցից տաճարի փլատակների մեջ պահպանվել են շուրջ տասը հատ: Այդ անկյունաքարերը, մշակված գդալաձև կարդամոտիվներով, ունեն համանման լուծումներ, և որ առավել ուշագրավ է, նրանց թեքադիր կողերով կազմված անկյունը հավասար է 156 աստիճանի, այսինքն ունի ճիշտ այնպիսի բացվածք, ինչպիսին ունի աբսիդների սյուների կենտրոնները միացնող գծերով կազմված, անկյունը»: Այնուհետև՝ «Նշված քարերը չէին կարող պատկանել ռոտոնդաձև պատին, որովհետև նրա նիստերի անկյունները անհամեմատ ավելի մեծ չափերի պիտի լինեին, ոչ պակաս 169°-ից»:

Առանց մեկնաբանության էլ հասկանալի է, որ կամարաքարի՝ դեպի ներս թեքվող ստորին եզրաշերտի գդալաձև կարդերով ստեղծված անկյունը ոչ մի կապ չունի անկյունաքարով սկսվող նիստերի անկյան հետ:

Նոր չափագրությամբ և ստուգումներով պարզվում է, որ վերոհիշյալ անկյունաքարը ունի ոչ թե 156, այլ 168—169°-ի անկյուն, որ երկու անկյունաքարերը միմյանցից հեռացված են եղել 255 սմ, հետևում է, որ այդպիսի անկյուն և նիստերի այդպիսի լայնք ունի մի թմբուկ, որի տրամագիծը մոտ 26,2 մետր է: Ճշտորեն այդպիսին է տաճարի թմբկաձև երկրորդ աստիճանը Թորամանյանի վերակազմությամբ:

Հետագայում նոր չափագրության տվյալների ճնշման տակ Ս. Մնացականյանը իր «Զվարթնոց...» աշխատության մեջ աշխարհ է բերում Զվարթնոցի նոր տարբերակ թմբկաձև երկրորդ աստիճանով: Այդ առթիվ 103-րդ էջում գրում է. «...թերևս բացառված չէ, որ Զվարթնոցը երկրորդ հարկաբաժնում ունենար ռոտոնդաձև հորինվածք...», և ապա «Այն հանգամանքը, որ տաճարի փլատակներում հայտնաբերված երկրորդ հարկաբաժնի կամարաղեղի քարերը կարող էին տեղ գտնել նաև այս տարբերակում, թվում է որոշակի հիմքեր է տալիս նման վերակազմության համար»:

Ս. Մնացականյանը այսպես կարող էր ասել սխալ համարելով անկյունաքարի 156°-ի անկյունը և ճիշտ՝ 169°-ի անկյունը: Այդ դեպքում սխալ պիտի համարեր իր նախորդ «տետրակոնխային» տարբերակն ամբողջությամբ, որը հիմնված է 156°-ի անկյան վրա:

Սակայն, ով կարմանք, աշխատության հաջորդ իսկ էջում կարդում ենք «Բայց և այնպես մենք նախընտրում ենք տետրակոնխային տարբերակը...»:

Քննությամբ պարզվում է, որ Զվարթնոցի երկրորդ աստիճանի թմբուկով տարբերակը ևս, ինչպես կառուցողական, նույնպես և ճարտարապետական-գեղագիտական առումով չի հաջողել հեղինակին:

Տաճարի երրորդ աստիճանը Ս. Մնացականյանի նախագծում բավական յուրօրինակ է, այն ստորին երկու աստիճաններից տարբերվում է և ընդհանուր պատկերով, և մանրամասներով, և մասերի մասշտաբային մշակմամբ, և նույնիսկ ոճային առանձնահատկություններով: Սրա շնորհիվ տաճարը կրկվել է ամբողջական պատկերից, ստացվել պատահական մասերի եռաստիճան խառնուրդ: Անիրապույր պատկերը ամբողջանում է նրանով, որ հայ ազգային ճարտարապետության կարևորագույն հուշարձանի գմբեթը այս նախագծում հագնում է բյուզանդականին հատուկ վեղար:

Տաճարի բարձրության որոշման կապակցությամբ Ս. Մնացականյանը գրում է. «Ինչ վերաբերում է տաճարի ընդհանուր բարձրությանը՝ ապա այս հարցում մենք հետևել ենք 7-րդ դարի տաճարներում այնքան լայն տարածում գտած օրինաչափությանը. դա այն է, որ տաճարի ներսի բարձրությունը հավասար է լինում նրա լայնությանը»: Այս հիման վրա Ս. Մնացականյանը Զվարթնոցը պատկերել է 35 մետր բարձրությամբ:

Բանն այն է, որ 7-րդ դարում այդպիսի օրինաչափություն գոյություն չի ունեցել. այդ չի հաստատվում նույնիսկ այն օրինակներով, որոնք նշել է հեղինակը: Այստեղ անսպասելին այն է, որ նա մոռացության է տալիս համեմատվող հուշարձանների հորինվածքային տարբերությունը: Բոլորակ հատակագծով, եռաստիճան ծավալատարածական հորինվածքով տաճարի բարձրության տվյալները քաղում է քառանկյուն հատակագծով, երկաստիճան տաճարներից:

Այսպիսով պարզվում է, որ Զվարթնոցի բարձրության որոշման մեջ ավելի դեր է խաղացել թյուրիմացությունը, քան գիտական սկզբունքը:

1978 թ. հրատարակած «Ակնարկներ հին և միջնադարյան Հայաստանի ճարտարապետության պատմության» (ռուսերեն) աշխատության Զվարթնոցին հատկացված 98—102 էջերը՝ շարադրված են Ս. Մնացականյանի կողմից: Ահավասիկ՝ շուրջ 258 տող պարունակող վերոհիշյալ էջերում Թորամանյանի վերակազմության մեկնաբանմանը հատկացված է միայն ու միայն 10 տող, մնացածը, ըստ էության նվիրված է այդ տասը տողը վիճարկելուն և Ս. Մնացականյանի վերակազմությունը հիմնավորելուն:

Անհավանական չէ, որ հենց ռուսերենով հրատարակված այդ գիրքը թարգմանվելու է նաև օտար լեզուներով ու այս ձևով էլ նրանց ներկայացվելու է հայ ճարտարապետական արվեստի գլուխգործոցը՝ երիցս աղավաղված Զվարթնոցը:

Ցավոք, տեքստին առընթեր գծագրերում ևս առկա է շփոթ: Այսպես՝ 100-րդ էջում տեղադրված է հատակագիծը, որտեղ առկա է արևելակողմի շինությունը, 102-րդ էջում աքսոնոմետրիկ տեսքում այդ շինությունը չկա (այդտեղ բացակայում են արևմտյան և հյուսիսային խորանների վերևի շուրջ տասը լուսամուտները ևս): Իրականում հատակագիծն այդ ձևով ստեղծվել է ի սկզբանե՝ 7-րդ դարում, մինչ Մնացականյանի բացատրությամբ այդ ձևն է ստացել 9-րդ դարի վերջերում միայն:

Ալբոմում, նույն էջի վրա կողք-կողքի տեղադրված են Զվարթնոցի տարբեր վերակազմությունների ճակատները և մակագրությամբ հասկացվում է, թե երկուսի կազմողներն էլ՝ Թորամանյանն ու Մնացականյանը ոչ ավել, ոչ պակաս միասին աշխատած հեղինակակիցներ են:

Ահա այսպես, մեր օրերում, մեր աչքերի առջև շատ բարեմասնություններով օժտված Զվարթնոցի Թորամանյանի մեծ չափով հավաստի նախագիծը անհարկի վատաբանվում, ի վերջո խոտանվում է:

Զվարթնոցի ընդհանուր հորինվածքի և ներքին կազմության հարցերին անդրադարձել է նաև արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Ա. Յակոբսոնը մեկ 1950 թվականին հրատարակած իր «Ակնարկ 5—17-րդ դդ. հայ ճարտարապետության պատմության» ռուսերեն գրված աշխատության էջերում, մեկ էլ 27 տարի անց՝ 1977 թվականին, գրախոսելով Ս. Մնացականյանի 1971 թ. հրատարակած «Զվարթնոց» ռուսերեն աշխատությունը (տես «Պատմա-բանասիրական հանդես», № 1, էջ 254—258):

Ա. Յակոբսոնը 1950 թվականին անվերապահորեն ընդունում էր Թորոս Թորամանյանի վերակազմությունը, ամեն կերպ դրվատելով այն:

Նույն Ա. Յակոբսոնը 1977 թվականին անվերապահ ընդունում է Ս. Մնացականյանի նոր վերակազմությունը, գովեստներ շարադրում նրա հասցեին, անհամաձայն մնալով



© National Library of Armenia

նրա հետ տաճարի կոմպոզիցիոն հորինվածքի սկզբնաղբյուրի՝ նախօրինակի հարցում:

Այսպես՝ Զվարթնոցի երկրորդ աստիճանի բոլորակ և խաչաձև տարբերակներից նախընտրում է երկրորդը, մոռանալով, որ ամեն մի նախընտրություն պիտի ռեալ հիմք ունենա: Եթե երկրորդ աստիճանի թմբկապատի նիստերի միջև անկյունը մոտ 169° է ու նիստերի լայնքը 255 սմ, որով բնորոշվում է 26 մետր տրամագծով թմբուկ, էլ ինչպե՞ս կարելի է նախընտրել խաչաձև տարբերակը, որի դեպքում նիստերի միջև անկյունը պիտի լիներ 156°: Կարևոր հարցերում այսպիսի մոտեցումը կարո՞ղ է ընդունելի լինել:

Տաճարի երկրորդ աստիճանի խաչաձևը հիմնավորելու համար գրախոսողը հաստատում է վերակազմողի դրույթը, թե յոթերորդ դարի հայ ճարտարապետության ոճական ուղղվածությունը քառախորանն էր, թե տաճարի ներքին կոմպոզիցիան ստանում է իր լիակատար և ոչնչով չխախտող արտահայտությունը: Ինչպես տեսնում ենք, այսպիսի սահմանափակումը 7-րդ դարից դուրս է թողնում Ավան-Հռիփսիմեի տիպի մի մեծ խումբ կարևորագույն տաճարներ և մի շարք նորաձև հուշարձաններ:

Վերոհիշյալ անձինք մոռանում են, որ յոթերորդ դարի հայ դասական ճարտարապետությանը նաև հատուկ էր շինության ներքին մասնատվածությունը արտաքին հորինվածքում ամբողջացումով, ընդհանրացումով արտահայտելը: Ինքը՝ Ա. Յակոբսոնը 29 տարի առաջ իր հիշյալ աշխատության 29-րդ էջում Զորավարի մասին գրում էր. «Զգտումը դեպի ընդհանրական մոնումենտալ ձևերը, որ այնքան տիպական է հայկական բալիլիկների համար, այստեղ արտահայտվում է ամբողջ ուժով»:

Նույն աշխատության 33-րդ էջում Զվարթնոցի՝ Թորամանյանի վերակազմությունը ներկայացնելիս գրում է. «Հակասությունը, որ դեռևս նկատելի է Հռիփսիմե եկեղեցու ներքին ու արտաքին կոմպոզիցիաների միջև, այստեղ ամբողջությամբ հաղթահարված է»: Նա շարունակում է. «Զվարթնոց տաճարը (Թորամանյանի վերակազմությամբ) սկզբից մինչև վերջ ներթափանցված է մեկ գեղագիտական գաղափարով, որ արտահայտվում է սահմանային պարզությամբ: Այն հայ ճարտարապետության հասուն և ավարտված ստեղծագործություն է»:

Այժմ, 27 տարի անց նույն ոգևորությամբ Ա. Յակոբսոնը գովաբանում է մի նախագիծ, որը տարբեր է և ոչնչով համարժեք չէ նախորդ՝ Թորամանյանի նախագծին:

Գիտության դոկտոր, արվեստաբան Ա. Յակոբսոնի գրախոսականում հանդիպում ենք նաև այսպիսի տողերի. «Ս. Խ. Մնացականյանի առաջարկած վերակազմությամբ Զվարթնոցը մեզ ներկայանում է միանգամայն նոր տեսքով — խիստ ամբողջական, ներդաշնակ, ճարտարապետորեն առավել բովանդակալից»:

Մեր գնահատմամբ՝ ճիշտ հակառակը. այդ վերակազմությունը կուրկ է որևէ միասնական ամբողջականությունից, նրանում բացակայում է կարևորը՝ մասերի ներդաշնակությունը:

Ա. Յակոբսոնը գրախոսության վերջում շոշափում է հայ և միրիական ճարտարապետության փոխհարաբերությունների հարցը, մի թեմա, որը ուղեկցում է հեղինակին բպում տասնամյակների ընթացքում և ամեն անգամ ելագիծ է դուրս գալիս, երբ քննարկվում է հայ ճարտարապետության ցանկացած պրոբլեմ, առավելապես կապված նախասկզբի, նախօրինակի և նման երևույթների հետ:

Հասկանալի է, որ Հայաստանն ու Սիրիան հարևան երկրներ են, հին կուլտուրայի օջախներ, կապված են եղել կյանքի բոլոր ոլորտներում, վերցրել ու տվել են առանց պարտք մնալու միմյանց:

Այս հարցերում Ա. Յակոբսոնի մոտ առ այսօր հաղթանակում է միակողմանիությունը: Այն հիման վրա, որ քրիստոնեությունը Հայաստան է անցել Սիրիայի ճանապարհներով, Հայաստանում ողջ միջնադարի ընթացքում կարգացման և ծաղկման հասած ամեն ինչի սկիզբը տանում է Սիրիա, արմատը ենթադրում այնտեղ:

Ա. Յակոբսոնի մեծ ու փոքր գործերի ծանոթությունից այն տպավորությունն է ստացվում՝ կարծեք թե նա իր ողջ գործունեությունը, որ պիտի դրականորեն գնահատվի, վի այն ոչ քիչ աշխատանք ու ջանք է կլանել հեղինակից, անուս է հանուն նրա, որ ի վերջո ասի, թե այդ ամենի սկիզբը Սիրիայում է:

Այնպես է ստացվում, կարծեք թե հայ ճարտարապետության համամարդկային սեփականություն դարձած ոչ քիչ մեծագործ արժեքները նախ ծլարձակվել են սիրիական հողում, ապա տեղափոխվել Հայաստան, ստացել կարգացում: Ահա այդ մտայնությունը առկա է նաև հիշյալ գրախոսականում: Նա այստեղ գրում է. «Զարմանալու ոչինչ չկա, որ հայ ճարտարապետները վերցրել են Սելևկիայի տաճարում, Բոսրայում և Ռուսաֆիում արտահայտված ճարտարապետական միտքը և փայլուն կերպով կարգացրել են այդ կոմպոզիցիան, ստեղծելով իր ճարտարապետությամբ կատարյալ և ավարտված Զվարթնոցը»:

Նա շարունակում է. «Զվարթնոցի բուն կոմպոզիցիան կապվավորվել է, ըստ երևույթին, սիրիական ճարտարապետության հիման վրա»:

Արդեն ասվածի տպավորությունը ինչ-որ չափով մեղմելու համար, Ա. Յակոբսոնը ինքն իրեն զգալապես հակասելով հիշում է. «Իհարկե, ճարտարապետական համակարգը, որի հիմքում ընկած է քառախորանը, Հայաստանում երևան էր եկել մինչև Զվարթնոցը և արդեն 7-րդ դ. սկզբում դարձել էր հանրածանոթ»: Եվ ապա ճշմարիտ է, որ կար նախորդը՝ «...նախ և առաջ Բագարանի եռաստիճան տաճարը (624 թ.): Բայց դա, այսպես ասած, նախադրյալ էր Զվարթնոցի ի հայտ գալու, հող ստեղծելու լոկ նախապատրաստություն»:

Արդ, եթե Զվարթնոցի հատակագծային հորինվածքի կենտրոնը կազմող քառախորանը Հայաստանում եղել է սովորական երևույթ, որպիսին քրիստոնեական և ոչ մի երկրում այդպիսի տարածում չուներ, իսկ Սիրիայում Սելևկիան և Բոսրան գրեթե բացառություններ էին, եթե չորս ապատ կանգնած սյուներով էջմիածնի խաչագմբեթարդ տաճարը ավելի քան հարյուր տարով կանխել է (կենտրոնական գմբեթ չունեցող) Ռուսաֆիին, եթե ծավալատարածական հորինվածքի առումով եռաստիճան կոմպոզիցիան Հայաստանում առկա էր, հանձին Բագարանի, Սիրիայում՝ ոչ, այնտեղ տարածված է երկաստիճան կոմպոզիցիան, եթե մեր որոշ բալիլիկներ ունեցել են սյունաշար սրահներ. այս ամենից հետո էլ ի՞նչ հիմքով մենք կարող ենք բաժանել Ա. Յակոբսոնի կարծիքը՝ թե Զվարթնոցի կառուցողները կոմպոզիցիան վերցրել են Սիրիայից:

Ամենևին չբաժանելով Ա. Յակոբսոնի կողմից գրախոսվող գրքի հեղինակ Ս. Մնացականյանի հայացքները տվյալ հարցի վերաբերյալ (նա Զվարթնոցը ամբողջությամբ անջընդպետում է դրսի աշխարհից), անվարան կարելի է ասել, որ Զվարթնոցը աշխարհին հայտնի Զվարթնոցը չէր լինի, եթե նրա կառուցողները այն երկնելիս նկատի ունենային շինարվեստի մեջ միայն ու միայն այն նվաճումները, որոնց հասել էին Հայաստանում:

Մեկ թվում է, որ Ա. Յակոբսոնը պարզապես երևույթները չի կոչում իրենց անուններով: Նա ամենայն իրավամբ կարող էր ասել, որ Հայաստանում հին ավանդույթով խորանները ստեղծվում էին խով պատով, մինչ Զվարթնոցում Սիրիայի կամ Բյուզանդիայի տաճարների օրինակով դրանք ստեղծվեցին թափանցիկ՝ սյունակամարաշարով, որոշ վարդաքանդակներ նմանվեցին սիրիականին և այլն: Ինչպես մենք հասկանում ենք, այս ամենը առանձին երևույթներ են, և ոչ շինության ամբողջական կոմպոզիցիա:

Այսպիսով, պարզվում է, որ Զվարթնոցի հատակագծային ամբողջական կոմպոզիցիան տեղական է, արտաքին ծավալատարածական կոմպոզիցիան տեղական է, արտաքին ճարտարապետական հարդարանքի լուծումներն ու կոմպոզիցիան տեղական են՝ հատուկ միայն ու միայն Զվարթնոցին, որպիսին այդ ժամանակ չկար ինչպես Սիրիայում, այնպես էլ Բյուզանդիայում և այլուր:

Ահա այսպիսին է եղել իրերի ռեալ վիճակը Զվարթնոցի կառուցման ժամանակներում:

Զվարթնոցը գրավել է նաև ԱՄՆ-ի Բլումինգտոնի համալսարանի պրոֆեսոր Յուշին Կեյնբաուերի ուշադրությունը: Գիտնականը 1978 թ. աշնանը Երևանում տեղի ունեցած հայ արվեստին նվիրված Միջազգային երկրորդ սիմպոզիումին ներկայացրեց իր կարծիքը Զվարթնոցի մասին, մասնավորապես նրա վերակազմություններին: Նրա կարծիքը ըստ էության վերակազմության առաջարկ է, սակայն առանց գծագրերի, որպիսիք, համաձայն հեղինակի խոստման, կներկայացվեն հետագայում:

Զվարթնոցի պրոբլեմների նրա քննարկումներում որոշակի զգացվում է հեղինակի մի շարք իրական փաստերի անտեղյակությունը: Ու թերևս դրանով էլ պետք է բացատրել, որ վաղուց պարզաբանված հարցեր, գիտնականը սկսում է նորից վերաքննել: Յուշին Կեյնբաուերի կարծիքով, Թորամանյանը Զվարթնոցի ճակատի գծագիրը պատրաստել է Ն. Մառի պեղումներով Գագկաշենի մանրակերտը հայտնաբերվելուց (1906 թ.) հետո, և որ այս վերջինս էլ, իբր որոշել է Գագկաշենի նախօրինակ Զվարթնոցի վերակազմության ուրվագծերը: Իրականում Թորամանյանը իր վերակազմության ճակատը ստեղծել էր 1904/5 թթ.: Կեյնբաուերը ենթադրում է, որ Գագկաշենի մանրակերտը վերականգնել է Թորամանյանը, որ վերջինիս վերնամասը նրա ենթադրությունների արգասիք է և այլն: Իրականում պեղումներով հայտնաբերված մանրակերտը, որի վերնամասը փշրված է եղել, վերականգնել, ամբողջացրել է Ն. Մառի արշավախմբի նկարիչ Ս. Ն. Պոլոտորացկին:

Կեյնբաուերի կարծիքով, հիմքեր չկան ենթադրելու, որ Զվարթնոց տաճարը եղել է եռաստիճան, որ ունեցել է վերնահարկ, որ ունեցել է այդքան շատ պատուհաններ և այլն: Նա հնարավոր է համարում գրել. «Թորամանյանի վերակազմությունը պատկերվում է որպես հարսանեկան եռաստիճան տորթ, որը հասցվել է ոչ արժանահավատ բարձրության (45 մետր), այդ նրան դարձրել է ամենաբարձր շինությունը, որ երբևիցե կարդարել է միջնադարյան Հայաստանի լանդշաֆտը»: Նա շարունակում է. «Չկա եռաստիճան արտաքին ծավալի և ոչ մի օրինակ: Որքան ինձ հայտնի է այդ կարևոր փաստը Զվարթնոցի հետ գործ ունեցած բոլոր մասնագետների համար մնացել է աննկատ, կամ արհամարվել է: Քրիստոնեական աշխարհի ցանկացած մասի վաղ միջնադարյան շրջանի ոչ մի շինություն չի հիշեցնում նրա վերակազմությունը»:

Որպես հարսանեկան տորթ, ինչ խոսք, ոչ միայն 45 մետրն է շատ, այլև 45 սմ-ը քիչ չէ, բայց գիտնականին թող հայտնի լինի, որ Թելավի շրջանի ընդամենը 26 մետր լայնք ունեցող, երկաստիճան հորինվածքով Ալավերդի անունով կաթողիկե տաճարի բարձրությունը հասնում է մոտ 53 մետրի, հետևաբար վարմանալի չպիտի թվա, որ 36 մետր տրամագծով, եռաստիճան հորինվածքով Զվարթնոցի բարձրությունը հասնում է 45 մետրի: Անհետաքրքիր չէ, որ «գետնամած» համարվող Հռիփսիմեում լայնքի ու բարձրության հարաբերությունը 1 : 1,4 է, մինչ Զվարթնոցում (ըստ Թորամանյանի) 1 : 1,26:

Բոլորին հայտնի է և մասնագիտական գրականությանը ևս, որ 624 թվականին կառուցված հայկական Բագարան տաճարը եռաստիճան հորինվածք է ունեցել և Զվարթնոցի համար եղել է նախօրինակ:

Ավելի քան տասը տարի առաջ մեր կողմից Յուշին Կեյնբաուերին է տրամադրվել Բանակ տաճարի նյութերից, որոնցով հայտնի է, որ 7-րդ դարում կառուցված և IX—X դարերի սահմանագծում վերականգնված այդ տաճարը նույնպես եղել է եռաստիճան:

Այս ամենից հետո հետաքրքրողը ինչպե՞ս է հնարավոր համարում գրել, որ իբր եռաստիճան արտաքին հորինվածքով շենքեր ողջ քրիստոնեական աշխարհում չեն եղել:

Շենք կարող չանդրադառնալ Յուշին Կեյնբաուերի տեսությանը Զվարթնոցի ակունքների վերաբերյալ: Ահավասիկ՝ «...պե՞տք է, արդյոք, Զվարթնոցը դիտել որպես ածանցյալ հուշարձան, թե՞ այն արգասիք է հայ ուրույն ստեղծագործական ջանքի»:

Ինքն իր հարցին պատասխանելով, գրում է. «...Այդ հարցում ճշմարտությունն ընկած է երկու եզրային հայեցակետերի միջև», ավելի կոնկրետանալով՝ «...մյուս կողմից եկեղեցու որոշ առանձնահատկություններ ի հայտ են բերում նրա ածանցյալ բնույթը: Զվարթնոցի հատակագիծը փոխառնված է Հայաստանից հարավ-արևմուտք ընկած շրջանից»: Եվ ապա «սյուների գործադրությունը նրանում, որ այնքան անսովոր է վաղ միջնադարյան հայ եկեղեցական ճարտարապետության համար, հաստատում են փոխառյալ լինելը»:

Սրա հետ մեր անհամաձայնությունը երկու առում ունի: Առաջինն այն է, որ այնպիսի մի բազմատարր, յուրօրինակ հյուսվածք, ինչպիսին Զվարթնոցի հատակագիծն է, նրանում գործադրված միմիայն մեկ տարրով բնորոշել չի կարելի: Պարզ չէ՞, որ լոկ սյունը դեռ ամբողջական հատակագիծ չէ: Երկրորդ անհամաձայնությունն այն է, որ մինչև Զվարթնոցը, Հայաստանում առանձին կանգնած սյունը ունեցել է ոչ քիչ գործադրություն: Եթե նույնիսկ մասայաբար գործադրվող քարե խարիսխներով փայտե սյուները նկատի չառնենք ու Գառնիի մասին չխոսենք, ապա քարակերտ սյուների գործադրությունն են հաստատում Երերույքի (5-րդ դար) ավերակում առկա քարե սյուների խոյակները, Դվինում առկա, ինչպես սովորական, այնպես էլ մեծ չափերի խոյակները, նաև քառակուսի ու խաչաձև հիմքով գմբեթակիր սյուները Էջմիածնում, Ծիծեռնավանքում, Բագարանում, Գայանեում և այլուր:

Այսպիսով, պարզվում է, որ Կեյնբաուերը տեղյակ չէ Հայաստանում առանձին կանգնած սյուների գործածության փաստին:

Թվում է, թե Կեյնբաուերը «փոխառյալ» կարող էր համարել ոչ թե հատակագիծն ամբողջությամբ, այդ ակներև սխալ է, այլ նրանում սյուների գործածության կերպը խորաններում: Ըստ որում, այստեղ կարևորը առանձին սյունը չէ, այլ այն մոտիվը, որը ստեղծվում է նաև սյան գործադրությամբ:

Այնուհետև Կեյնբաուերը գրում է. «Զամբյուղահյուս խոյակները բոլորից ավելի նման են հյուսիսային Միջագետքում առկա օրինակներին, ... իսկ արծվաքանդակ խոյակները

© National Library of Armenia

հիշեցնում են V—VI դդ. բյուզանդական մի մեծ խումբ խոյակների»:

Յուզին Կլեյնբաուերի այս արտահայտությունները մեզ անմիջականորեն հիշեցնում են Անատոլի Յակոբսոնի նույնպիսի արտահայտությունները, բերված նրա վերոհիշյալ աշխատության էջերում: Այստեղ կամբյուղաhյուս խոյակների մասին կարդում ենք. «Հնարավոր է, որ այդ խոյակների պատրաստմանը մասնակցած լինեն հունական (սիրիական) վարպետներ»: Արծվաքանդակ խոյակների մասին նույն տեղում կարդում ենք. «...ավանդված է դեռևս անտիկ արվեստից, որը հելլենական արևելքում եղել է այնքան տարածված»:

Մեզ հայտնի է, որ Զվարթնոցի կողովահյուս և արծվապատկեր խոյակների հավաստի նախօրինակներ և ճշգրիտ կրկնօրինակներ աշխարհում չկան (բացառությամբ մեր 5-րդ դարի Երերույք տաճարի կողովահյուս խոյակի): Կան, իհարկե, խոյակներ, որ ստեղծված են կենդանիների գլուխների և այլ պատկերներով, կան նաև արծվապատկեր մոտիվներ, սակայն դրանք լոկ մոտիվներ են ու թեմաներ, որ շատ հնուց են գալիս, բայց դրանցից ոչ մեկը այնպիսի մարմնավորում չի առացել, ինչպիսին տեսնում ենք Զվարթնոցում: Թվում է, թե մենք ունենք բավական համբերություն դարձյալ սպասելու, որ այդ գիտնականները երբևէ որևէ խոյակի լուսանկար կհրապարակեն, որ նման լինի Զվարթնոցի խոյակներից մեկն ու մեկին:

Յուզին Կլեյնբաուերը քայլ առ քայլ մեր առջև բացում է իր տեսության նոր էջեր. «Այնքան, որքան այն ժամանակներում նրա (Զվարթնոցի—Տ. Մ.) հատակագիծը Հայաստանում բացառություն էր, այն իրականում գտնվում է Ս. Հռիփսիմեով և Ս. Գայանեով ներկայացվող հայ եկեղեցական յուրօրինակ ճարտարապետության հիմնական շարժումից դուրս»:

Կասկածի կամ վիճարկման ենթակա չէ, որ հայ ճարտարապետության զարգացման գլխավոր գիծը 7-րդ դարի կեսերին անցել է Զվարթնոցով: Զվարթնոցը եղել է իրեն նախորդած ողջ ժամանակաշրջանի զարգացման տրամաբանական շարունակությունը, նրա պսակը: Այդ շարժման գլխավոր գիծը նախորդներով չի ընդհատվում և, ապա հետագան լոկ Զվարթնոցով չի սկսվում: Զարգացման այդ գիծը իր որոնումներով, թռիչքներով ու վիգզագներով միասնական է և օրգանական: Եթե իրողությունը այդպես չլիներ, եթե տվյալ հորինվածքի ստեղծման բուն նախադրյալները տեղական չլինեին, ապա Զվարթնոցը հատկապես Հայաստանում չէր ստեղծվի և նրա որոշ կողմերի ազդեցությամբ նույն բնույթի նոր տիպեր չէին առաջանա: Զվարթնոցը, որպես երևույթ խորթ-անհարազատ կմնար իր շրջապատում, ինչպես երբեմն լինում է կյանքում:

Նախքան Զվարթնոցը քառակոնխի թեման շուրջ 200 տարի մշակվում էր հայ ճարտարապետության շրջանակներում և այն հորինվածքային այնպիսի բազմազանություններով պսակվեց, որի հետ ի վիճակի չեն համեմատվել ճարտարապետական այլ շրջանակներ:

Յուզին Կլեյնբաուերը չկամենալով, «մեծահոգաբար» հայ ճարտարապետությանը բաժին է թողնում հուշարձանի հաշող տեղադրումը համաձայն ավանդույթի, շինանյութի ընտրությունը տեղական հանքերից, հմուտ կառուցող-իրականացնողի պատիվը, ապա և նախօրինակի փայտածածկերի քարով փոխարինելու պարտականությունը:

Քառաթև էքսեդրները մի շրջագծի բերելու և շրջանց սրահը քարով ծածկելու համար Զվարթնոցում արծվախոյակ սյան տվյալ ձևով տեղակայումը և, ապա, մեծաչափ կոր եզրաղեղով կամարաթաղերի ստեղծումը ինքնին ճարտարապետական-ստեղծագործական մտքի մի թռիչք էր, որի նշանակությունը իր ստվերում է թողնում Կլեյնբաուերի հիմնական կռվանը՝ սյուների գործադրման փաստը Զվարթնոցում:

Զարմանալի տրամաբանությամբ են առաջնորդվում Զվարթնոցի առաջին վերակազմությունը վիճարկողները: Թորոս Թորամանյանի պես հզոր գիտնականի և նուրբ արվեստագետի խորապես մտածված դրույթները ժխտելու համար վկայակոչում են հետազոտողների և, նույնիսկ ոչ մասնագետների, որոնք նյութը դեռ լրիվ չուսումնասիրած, երբեմն էլ վերակազմության ամբողջությունն ու մանրամասները չհասկացած, լոկ ենթադրական կարծիքներ են հայտնել ու անցել. այդ կարծիքները մինչև օրս ոչ ոքի կողմից հավանության չեն արժանացել, գիտականորեն չեն հիմնավորվել, ըստ էության չեն արժեքավորվել և, հետևապես, չեն ճանաչվել:

Յուզին Կլեյնբաուերը Զվարթնոցի արտաքինը վերակազմողներին համոզում է դիմել հայկական և ոչ-հայկական տետրակոնխերին, իսկ ներքին պատկերը ստեղծողներին՝ հետնել Հռիփսիմեի ինտերյերին — ներքին պատկերին:

Այս դեպքում էլ ի՞նչ տրամաբանությամբ է ղեկավարվում գիտնականը, որ այդ ձևով ստացված Զվարթնոցը դուրս է դնում հայ ճարտարապետության շարժման գլխավոր գծից, համձնելով ում ուզում է, բայց ոչ երբեք նրա իսկական ստեղծողներին:

Վերոհիշյալի հիման վրա հնարավոր է դառնում եզրակացնել, որ Յուզին Կլեյնբաուերին չի հաջողվել զվարթնոցագիտությանը բերել դրականորեն արժեքավոր որևէ հավելում: Աշխատության անհաջողության հիմքում պետք է նկատել գիտնականի պակաս ծանոթությունը հայ ճարտարապետության ընդհանուր պատմությանը, Զվարթնոցի ավերակում տևական հետազոտությամբ զբաղվելու հնարավորություն չունենալը, ինչպես և Զվարթնոցին նվիրված մյուս աշխատությունների ոչ լիակատար ծանոթությունը, թերևս վերջիններիս միայն հայերեն հրատարակված լինելու պատճառով:



ԱՐՁԱԿ

ՄՈՒՇԵՂ ԳԱԼՇՈՅԱՆ

ՄԵՂԱՊԱՐՏԸ



Գծանկարները՝ ՎԱՐԴԱՆ ԹՈՎՄԱՍՅԱՆԻ

1

Իրիկնապահ էր, երբ Տիգրանը ընդունեց հերթափոխը:

Սովորությամբ, նախ հրացանը ստուգեց՝ Վասիլին նորից յուղել էր:

— Չես հասկանում այս մարդուն, հազար անգամ ասել է, որ դրա կարիքը չկա: Եթե կրակելու պետք լինի, որպես թե՝ դժվար է յուղել:— Եվ գնդակները հանեց-դցեց գրպանը:— Յոթը ամիս է պահակ է, բայց կրակելու առիթ չի եղել, յոթը տարի էլ մնա, այդպիսի տհաճ պատեհություն չի հայտնվի. ո՞ր հիմարի, ո՞ր խենթի մտքով կանցնի կողոպտել ուժանակի պահեստները: Ուժանակ... Պարզապես պետք է ուշադիր լինել, որ երեխաները մոտերքում կրակ չվառեն: Երբեմն նաև փողոցները մաքրողներն են ակտիվանում. քաղաքի աղբը թողած, հասնում են այս արվարձաններիի չոր տերևները այրելու:— Նա ստուգեց նաև պահակատան հեռախոսը: Աշխատում էր: Հետո հրացանը ուսեց ու, երկտակված, պահակատնից դուրս եկավ, ապա երկաթյա դարպասից դուրս եկավ, կողպեց դարպասը և քայլեց աղյուսաշար պարիսպն ի հետ: Ուժանակի պահեստների շուրջբոլորը քաշված ցանկապատի հետ պտույտ գործեց և նորից կանգնեց դարպասի մոտ: Եվ հաճելին այդ, դարպասի, մայթն էր՝ ջահել կեչիների շարքով ու արևոտ: Կասկածելի ոչինչ չկար:

Եվ ծխելով սկսեց վերուվար անել:

Փողոցը խաղաղ էր:

Այդ փողոցով ոչ տրամվայի գիծ էր անցնում, ոչ՝ տրոլեյբուսի, ոչ՝ երթուղային ավտոբուս—արվարձանի այդ փողոցի երկու կողմերում միայն պահեստներն էին և մայթերի հետ ձգվող աղյուսե պարիսպները՝ երկաթյա դարպասներով:

Իրիկնապահ էր. պահեստներում արդեն դադարել էր եռուզեռը:

Դիմացի մայթին բարձրահասակ ու չորչրուկ մի մարդ հայտնվեց: Մարդը քայլում էր ձեռքերը ետևը դրած, ծնոտը կրծքին սեղմած և սևեռուն հայացքը մայթին: Չգիտես ինչու, Տիգրանը փորձեց որոշել, թե այդ մարդը ինչացու է, ով կլինի: Տնտղեց և կարգեց հաշվապահ,— պահեստներից մեկի հաշվապահն է:

Հետո մի դարպաս ճռնչաց, մի գնդլիկ աշխույժ դուրս պրծավ և շուրջբոլորը նայելով շտապեց: Դարպասի մոտ կանգնած պահակը հարգանք-հայացքով ուղեկցում էր նրան, և Տիգրանը որոշեց, թե խլվլան գլխով այդ գնդլիկը պահեստապետն է և, դուրս գալուց առաջ, մի բաժակ հյուրասիրել է պահակին:

Հետո նա ժպտաց իր խաղի վրա,— պարապությունն ինչ խաղի մեջ ասես կքաշի մարդու: Սակայն խաղը նրան դուր էր եկել:— Էլի ո՞վ կհայտնվի:

Դիմացի մայթին ճմրթված վերնաշապիկով մի ջահել երևաց: Եվ գնում էր ոչ թե փողոցն ի վեր, դեպի քաղաք, այլ քաղաքից էր գալիս և ուղղություն էր վերցրել դեպի մթերապահեստները: Քայլում էր կամուկաց. մի երկու անգամ փորձեց ետ դառնալ, բայց ձեռքը թափ տվեց ու շարունակեց: Տիգրանը երկար տվեց-առավ և վերջը որոշեց, որ ջահելը մթերապահեստի պահակի որդին է... Չնայած պահակի որդին կարող էր լինել նաև ինժեներ,— ահա՝ իր որդին,— բայց դա պահակի որդին էր:

Հետո մի կին հայտնվեց: Հնամաշ պայուսակ ուներ և, ժամանակից շուտ, հագել էր ռետինե երկարաճիտք կոշիկներ: Տիգրանը տեղն ու տեղը գտավ՝ կինը պահեստներից մեկի հավաքարարն է:

Այնուհետև անհագին ժամանակ փողոցում ոչ ոք չերևաց:

Իսկ Տիգրանը սպասում էր:

Հրացանն ուսած քայլում էր դարպասի արևոտ

© National Library of Armenia